

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 7

ք. Երևան

26.12.2007թ.

Ներկա էին խորհրդի 70 անդամներից 63-ը:

Նախագահող՝ խորհրդի նախագահ Ս. Սարգսյան:

Օր ա կ ա ր գ ու մ .

1. Ռեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2006-2007 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ:
2. ԵՊՀ 2006-2007 ուսումնական տարվա եկամուտների և ծախսերի մասին հաշվետվության հաստատում:
3. ԵՊՀ 2008թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագծի հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

1. Ռեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2006-2007 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ:

*Ձեկ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան*

**Ա. Սիմոնյան** - Թույլ տվեք սկսել կրթական գործունեությունից: Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում ներդրվեցին մի շարք նոր մասնագիտություններ, մասնավորապես՝ «հանրային կառավարում»՝ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, «կառավարում»՝ տնտեսագիտության ֆակուլտետում, «լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն. ռուսաց լեզու»՝ ռուս բանասիրության ֆակուլտետում, «լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն. անգլերեն լեզու»՝ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում:

Ուսումնական գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով անցյալ ուստարում ԵՊՀ-ում կատարվեցին մի շարք կառուցվածքային փոփոխություններ: Այսպես, համալսարանի գիտական խորհրդի 2007թ. հունիս ամսվա նիստի որոշման համաձայն մեխանիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետները միացվեցին՝ վերակազմավորելով մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ

Հաշվետու տարում ԵՊՀ ուսանողների թիվը, առանց Իջևանի մասնաճյուղի, եղել է ավելի քան 13000, որից 2300-ից ավելին մագիստրատուրայի սովորողներն են: Բակալավրիատի ուսանողների ավելի քան 30%-ը և մագիստրատուրայի սովորողների 20%-ից ավելին սովորել են անվճար հիմունքներով: Անցած ուսումնական տարում

համալսարանը տվել է մոտ 3500 շրջանավարտ, որից ավելի քան 1000-ը՝ մագիստրոսական կրթությամբ: Բակալավրիատը գերազանցության դիպլոմով ավարտել է 445 հոգի: Վերջին հինգ տարվա ընթացքում ԵՊՀ ուսանողների թիվն աճել է 32%-ով, իսկ շրջանավարտներինը՝ մոտ 50%-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանի դասախոսական հիմնական կազմը ներկայացրել են 1229 հոգի, որոնցից 158-ը պրոֆեսորներ են, 423-ը՝ դոցենտներ: Լուրջ խնդիրներ ունենք կապված պրոֆեսորադասախոսական կազմի տարիքային հարցի հետ: Պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացման նպատակով 2006-2007 ուսումնական տարում հետևողական քայլեր ձեռնարկվեցին 70-80-ից բարձր տարիք ունեցող դասախոսների ուսումնական բեռնվածությունը նվազեցնելու և նրանց փոխարեն երիտասարդ դասախոսների ներգրավելու ուղղությամբ: Կադրային քաղաքականության համալիր ծրագիր կիրառվեց երիտասարդ մասնագետներին խրախուսելու և համալսարանում պահելու համար, գիտական աստիճան ունեցող լաբորանտներին հնարավորություն ընձեռվեց լրիվ կամ մասնակի ներգրավվելու դասախոսական աշխատանքում:

Վերանայվեցին ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը, մասնավորապես փոփոխվեց որոշ աշխատածների համար հատկացվող ժամաքանակը, և իջեցվեց դասախոսի միջին բեռնվածությունը (640 ժամ): Դասախոս-ուսանող թվային հարաբերակցությունը դարձել է 1/10:

ԵՊՀ ուսումնաօժանդակ համակազմի հաստիքների ձևավորման նորմերը հաստատելու և ֆակուլտետների ու ամբիոնների հաստիքները սահմանված նորմերին համապատասխանեցնելու նպատակով անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու մասին ռեկտորի 2007թ. մարտի 19-ի հրամանի համաձայն ձեռնարկված գործընթացով ԵՊՀ-ում նախատեսվեց 365 հաստիք: Ավելորդ հաստիքների կրճատման արդյունքում առաջացած աշխատավարձային ֆոնդը վերաբաշխվեց մնացած աշխատակիցների միջև, և արդյունքում ուսումնաօժանդակ կազմի աշխատավարձը բարձրացվեց միջինում 12%-ով:

Ի կատարումն ՀՀ Կառավարության համապատասխան որոշման և ՀՀ բուհերում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու մասին կարգի՝ 2005-2006 ուսումնական տարվանից ԵՊՀ-ում ստեղծվեց ուսումնական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման ժամանակավոր ընթացակարգ, որը վերանշակվեց, և ստեղծվեց կանոնակարգ, ըստ որի համալսարանական և ֆակուլտետային մանդատային հանձնաժողովների կողմից իրականացվեց ուսանողների՝ վճարովի համակարգից անվճար և հակառակը տեղափոխման և կրթաթոշակների նշանակման գործընթացը: Այս ուստարվա սեպտեմբեր ամսին փոխատեղման գործընթացի արդյունքում 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողներին՝ 1310 հոգու, հատկացվեց նպաստ, որից 659-ը՝ 2-րդ կուրսում, 651-ը՝ 3-րդ կուրսում: 2-րդ կուրսում 214 ուսանող (32.5%), իսկ 3-րդ կուրսում 143 ուսանող (21.9%) ենթարկվեցին համակարգի փոփոխման: Չնայած ձեռնարկված հետևողական աշխատանքին՝ այս գործընթացի կազմակերպման ժամանակ առաջանում են որոշակի դժվարություններ՝ պայմանավորված առկա օրենսդրական դաշտի անկատարությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում, համաձայն ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի, շարունակվել է ուսման վարձավճարների զեղչման գործընթացը: Ձեղչվել է շուրջ 1700 ուսանողի վարձավճար, որը կազմել է մոտավորապես 250 մլն դրամ գումար:

Կրթության որակի ապահովման և վերահսկման համակարգի հիմնական մեխանիզմներից մեկը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստումն է գործընկերության շրջանակներում: Նման ծրագիր արդեն իրականացնում ենք «Սինոփսիս-Արմենիա» ՓԲԸ-ի հետ, որի շրջանակներում ձևավորվում է համալսարան-գործատու համագործակցության մոդելը: Այս համագործակցությունը փոխշահավետ է այն առումով, որ գործատուն անմիջական մասնակցություն ունի մասնագետների պատրաստման գործընթացին: Համագործակցության արդյունքում 2006-2007 ուսումնական տարում բակալավրի ծրագրով ԵՊՀ-ն տվեց առաջին շրջանավարտները, որոնք իրենց ուսումը կշարունակեն մագիստրատուրայում:

Հաշվի առնելով հանրապետությունում հեռակա ուսուցմամբ կրթություն ստանալու ցանկություն ունեցողների տարեցտարի աճող թիվը՝ ԵՊՀ-ն նպատակահարմար գտավ 2007-2008 ուսումնական տարվանից վերաբացել հեռակա ուսուցումը 16 ֆակուլտետներում, 26 մասնագիտությունների գծով:

ԵՊՀ գիտական խորհրդի 2007թ. փետրվարի 6-ի որոշմամբ հաստատվել է «Երևանի պետական համալսարանում մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» հայեցակարգային բնույթի փաստաթուղթը, որը մեթոդաբանական հիմք հանդիսացավ 2007-2008 ուստարվանից համալսարանում իրականացվող բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական կրթությունը կրեդիտային համակարգի հենքով կազմակերպելու համար: Համալսարանական ամբիոնների կողմից մշակվել և հայտագրվել է 118 մագիստրոսական ծրագիր՝ 44 մասնագիտությունների գծով, որոնցից այս ուսումնական տարում գործարկվել է 98-ը, իսկ դրանցում ընդգրկված մագիստրանտների թիվը 1200-ից ավել է:

ԵՊՀ գիտական խորհուրդը ս. թ. հունիսի 28-ին հաստատել է «Երևանի պետական համալսարանում կրթության որակի ապահովման հայեցակարգ»-ը, որը սահմանում է որակի ներքին վերահսկման համակարգի կազմակերպման մեթոդաբանական հիմքերը և նախանշում կարճ ժամկետում կրթական գործընթացի որակի ապահովմանն ուղղված ընթացակարգերի ներդրման և կատարելագործման ռազմավարությունը: Հայեցակարգում տրվում են համալսարանում որակի ապահովման ներկայումս գործող համակարգի հիմնական կառուցատարրերի մանրամասն վերլուծությունը և դրանք կրթական գործընթացի որակի շարունակական վերահսկումն ապահովող ընթացակարգերի լայնածավալ համակարգի վերածելու հնարավորությունների գնահատումը: Բնորոշվում են համալսարանական կրթության որակի ապահովման համակարգի հիմնական պարամետրերը, որոնք նախատեսում են դասավանդման որակի պարբերական մոնիտորինգի համակարգի ներդրում: Այն ներառում է ոչ միայն դասախոսի՝ ուսումնական տարվա արդյունքներով ակադեմիական գործունեության որակի գնահատական պարունակող ինքնահաշվետվության, այլ նաև նրա կողմից իր աշխատանքային միջավայրը գնահատելու, իր կրթական գործունեության որակի

բարելավմանը խոչընդոտող այդ միջավայրի որակից բխող գործոնները ներկայացնելու և վերլուծելու բաղադրիչը (այդ թվում՝ ստորաբաժանման ղեկավարի կողմից արդյունավետ աշխատանքային միջավայր ձևավորելու հետ կապված), ինչը վերջին տարիներին արդեն իսկ կիրառվող ուսանողական հարցումների տվյալների հետ մեկտեղ ամբողջացնում է կրթության որակի վրա ներազդող գործոնների համակազմը և ամփոփ տվյալներ ապահովում օբյեկտիվ վերլուծության համար:

Հայեցակարգը մեծ կարևորություն է տալիս նաև որակի կուլտուրայի ձևավորման, ակադեմիական ինքնակառավարման կառույցների դերակատարության բարձրացման խնդիրներին:

Ուսումնակրթական ոլորտում իրականացված զգալի աշխատանքների կողքին կան նաև մի շարք բացթողումներ, որոնք որոշակիորեն խոչընդոտում են բնագավառի արդյունավետ գործունեությունը: Մասնավորապես, ֆակուլտետներում դանդաղորեն են ընթանում համալսարանական կրթության բարեփոխումների գործընթացները: Նկատելի է պասիվությունը ֆակուլտետի կողմից, քիչ են արձագանքները տեղերից, բարեփոխումները քիչ են դառնում քննարկման մյուս ֆակուլտետների խորհուրդներում, մեթոդխորհուրդներում: Ստահագիչ է բարեփոխումներն իրականացնող դասախոսների անիրազեկության աստիճանը՝ կապված բարեփոխումների հետ:

Լուրջ վերանայման կարիք ունեն առարկայական ծրագրերը: Դրանք առավելագույնս պետք է համապատասխանեն 21-րդ դարի մասնագետի պատրաստման պահանջներին: Ուսումնական պլանների վերանայումը թույլ կտա արդյունավետ ուսուցում ապահովել և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում՝ բացառելով անհարկի կրկնությունները: Համալսարանում շարունակում է գերակշռող մնալ դասավանդման ավանդական, զարգացնող ուսուցմանը շատ քիչ միտված մեթոդիկան: Մինչդեռ կրթության նորացումը պահանջում է ոչ միայն բովանդակային, այլև մեթոդական բարեփոխումներ:

Համալսարանական կրթության բազմաստիճանացումը և Բոլոնիայի գործընթացի հենքին նրա՝ իբրև հարատև կրթության վերաիմաստավորումը նոր խնդիրներ առաջադրեցին հետբուհական լրացուցիչ կրթության վարչությանը:

Հարկ է նշել այս կառույցի երկու կարևոր դերակատարումը համալսարանական կյանքում: Առաջինը՝ աշխատելով համալսարանի բոլոր ֆակուլտետների և ամբիոնների հետ՝ նրա գործունեության շնորհիվ վեր են հանվում համալսարանի տարբեր ստորաբաժանումների հնարավորությունները, մեկ այլ տեսանկյունից ևս դիտարկվում ու գնահատվում է համալսարանի կրթագիտական ներուժը: Երկրորդ՝ վերապատրաստման կրթական ծրագրերով կապվելով հանրապետության պետական ու ոչ պետական տարբեր կառույցների հետ՝ վարչությունը նպաստում է համալսարանի և հասարակության կապերի ընդլայնմանը:

Անցած հինգ տարիների արդյունավետ գործառնությունը վարչությանը հնարավորություն տվեց համալսարանում լիարժեք իրականացնելու լրացուցիչ կրթությունը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով նախատեսվող երկու կրթական ծրագրով՝ դասախոսների որակավորման բարձրացման և մասնագիտական վերապատրաստման:

ԵՊՀ կառավարման համակարգում 2007թ. հունվար ամսից գործում է մինչհամալսարանական կրթության կենտրոնը, որի նպատակն է համակարգել ԵՊՀ ընդունելության և դիմորդների նախապատրաստման ուղղությամբ համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները, ամրապնդել ԵՊՀ-ի և ՀՀ հանրակրթական հաստատությունների (դպրոցներ, քոլեջներ, վարժարաններ, նախնական մասնագիտական հաստատություններ) միջև փոխադարձ կապը, ապահովել դպրոց-բուհ համակարգի շարունակական կրթության սկզբունքը, շուրջամյա տեղեկատվական և կազմակերպչական աշխատանքներ իրականացնել առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների հետ, կազմակերպել բազմամակարդակ նախապատրաստական դասընթացներ:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աջակցությամբ մայրաքաղաքի և մարզերի շուրջ 40 դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար տարբեր մասնագիտությունների գծով կազմակերպել և անցկացրել է ակնարկային դասախոսություններ, որոնց ակտիվորեն մասնակցել են պատմության, ռուս բանասիրության, արևելագիտության, ժուռնալիստիկայի, ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, մաթեմատիկայի և մեխանիկայի, աշխարհագրության, երկրաբանության ֆակուլտետների դեկանները:

Հաջորդ ուղղությունը, որին կանդիդատական գիտահետազոտական աշխատանքներն են:

Հաշվետու տարում համալսարանում շարունակվել է 161 թեմայով գիտահետազոտական աշխատանքների կատարումը, որոնցից 103-ը՝ պետական պատվերով, 29-ը՝ միջազգային գիտատեխնիկական ծրագրերով, 23-ը՝ գիտահետազոտական լաբորատորիաներում և 6-ը՝ գիտական կենտրոններում: Գիտահետազոտական աշխատանքների ընդհանուր մասնաբաժնում գիտական թեմաների ավելի քան 1/5-ը որպես կանոն բաժին է ընկնում ֆիզիկայի ֆակուլտետին (18 պետպատվերով, 6 լաբորատորիա և 10 միջազգային ծրագրերով): Առաջատարի հաջորդ եռյակը կազմում են կենսաբանության ֆակուլտետը (10 թեմա, 5 լաբորատորիա), քիմիայի ֆակուլտետը (8 թեմա, 3 լաբորատորիա), մաթեմատիկայի ֆակուլտետը (9 թեմա): Ընդհանրապես, գիտահետազոտական աշխատանքների գերակշռող մասը բնական գիտություններից է (68 թեմա), սակայն այս տարի արդեն հասարակագիտական և հայագիտական ուսումնասիրությունների ծավալը զգալիորեն մոտեցվել է բնական գիտություններին:

Պետական պատվերով թեմաներում ընդգրկված է ԵՊՀ 479 աշխատակից, որոնցից 125-ը հիմնական աշխատող են, 323-ը՝ ներսի համատեղող: Լաբորատորիաներում ընդգրկված է 367 աշխատակից (195-ը՝ հիմնական, 116-ը՝ ներսի համատեղությամբ): Համալսարանում գործող գիտական տարբեր կենտրոններում ընդգրկված է ևս 43 աշխատակից (հիմնական՝ 20, ներսի համատեղությամբ՝ 23): Այսինքն, նշված բոլոր թեմաներում ընդգրկվել է 903 համալսարանական, որոնցից 464-ը՝ համատեղության կարգով: Սա, ըստ էության, վատ ցուցանիշ չէ: Իսկ ընթացիկ տարվա ներկայացված գիտական թեմաներում նրանց թիվն ավելի մեծ է: Այս ամենը վկայում է, որ մեր դասախոսները հնարավորություն ունեն հիմնական աշխատանքին զուգահեռ

կատարելու նաև գիտական ուսումնասիրություններ, ինչի շնորհիվ կարող են զգալիորեն ավելացնել իրենց ընտանեկան բյուջեն:

Գիտական ուսումնասիրություններ կատարվել են բոլոր ֆակուլտետներում, ինչը և արտահայտվել է տպագրված հոդվածներով՝ 1367 հոդված, 620-ը՝ գիտաժողովի թեզիսի և 54-ը՝ մենագրության տեսքով: Ու թեև մենագրությունների թվով առաջընթացը նախորդ տարվա համեմատությամբ այնքան էլ զգալի չէ ( 51-ի փոխարեն 54), սակայն մյուս կողմից՝ առաջընթացն առավել ակնհայտ է թեզիսների տպագրության առումով (նախորդ տարվա 330-ի փոխարեն հաշվետու տարում տպագրվել է 620-ը): Դա նշանակում է, որ մեծապես ավելացել է միջազգային և հանրապետական գիտաժողովներում մեր դասախոսների մասնակցությունը, ինչը, անշուշտ, գովելի փաստ է: Առաջատարի դիրքում այստեղ ևս ֆիզիկայի ֆակուլտետն է՝ 118 հոդված և 217 թեզիս, ապա հաջորդում են կեսաբանության ֆակուլտետը՝ 106 հոդված և 180 թեզիս, պատմության ֆակուլտետը՝ 128 հոդված, սակայն 7 թեզիս և այլն: Մենագրությունների առումով առաջատարը հայ բանասիրության ֆակուլտետն է (10 մենագրություն), որին հաջորդում են փիլիսոփայության և հոգեբանության, պատմության, իրավագիտության ֆակուլտետները (համապատասխանաբար՝ 7, 6 և 5 մենագրություն) և այլն: Ուսումնամեթոդական ձեռնարկներ ամենից շատ տպագրել են հայ բանասիրության ֆակուլտետը՝ 9 ձեռնարկ, ռոմանոգերմանական բանասիրության ֆակուլտետը՝ 7, իրավագիտությանը՝ 6:

Տարվա գիտական կյանքի կարևոր իրադարձություններից մեկը «Սինքրոնոտրանային ճառագայթման օգտագործմամբ գիտական հետազոտությունների կենտրոն» գիտահետազոտական ինստիտուտի (ՔԵՆԴԼ) ստեղծումն էր, որը 2007թ. հունվարի 16-ից Երևանի պետական համալսարանի առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումն է:

Հաշվետու ժամանակաշրջանում գիտական իրենց գործունեությունը սկսեցին ծավալել նախորդ տարում հիմնված մի շարք կառույցներ՝ հայագիտական հետազոտությունների, քաղաքակրթությունների և մշակութային հետազոտությունների, վրացագիտության, եգիպտագիտության, օսմանագիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների, եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնները, ԵՊՀ պատմության թանգարանի գիտահետազոտական և հնագիտության գիտահետազոտական լաբորատորիաները: Գիտահետազոտական այս կենտրոնները իրենց տեսակի մեջ եզակի են հանրապետության գիտական համակարգում, ուստի այստեղ կատարվող աշխատանքները կարևոր ներդրում կլինեն գիտության բնագավառում:

Նշմարելի առաջընթաց կա ասպիրանտներին գիտահետազոտական թեմաների մեջ ընդգրկելու տեսակետից, սակայն հարկավոր է այս ձեռքբերումը զարգացնել: Այսպես, վերջին հինգ տարվա կտրվածքով պատկերն հետևյալն է՝ 2002 և 2003 թթ. ասպիրանտների մասնակցության աստիճանը 0 էր, 2004թ.՝ 19 ասպիրանտ, 2005թ.՝ 23, իսկ արդեն 2006 թ. 39 ասպիրանտ և 31 մագիստրոս են ընդգրկվել գիտահետազոտական թեմաներում: Ընթացիկ տարում այդ թիվը կկազմի 150 և ավելի, որովհետև ներկայացված յուրաքանչյուր գիտական թեմայում և լաբորատորիայում ներգրավված է ասպիրանտ, հայցորդ, գիտական խորհրդի երաշխավորությամբ՝ նաև

մագիստրոս: Չպետք է մոռանալ, որ ասպիրանտների այս ներգրավվածությունը պետք է մնա որպես բարձր որակավորման կադրերի՝ գիտություն մուտք գործելու հիմնական ուղի:

Հաշվետու տարում հրատարակչությունը լույս է ընծայել 133 անուն գիրք՝ 2050 հրատ. մամուլ ծավալով, ընդհանուր տպաքանակը՝ 35200 օրինակ:

Նկատելիորեն ավելացել է բուհական դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, բառարանների թիվը: Հրատարակված գրքերի ճնշող մեծամասնությունը նախատեսված է ուսանողների համար:

Ավելացել է ԵՊՀ պատվերով լույս տեսնող գրքերի թիվը: Տարվա ընթացքում ֆակուլտետների խորհուրդների կողմից հրատարակության երաշխավորված բոլոր գրքերը լույս են տեսել (35 անուն գիրք): Կոտրվել է այն մտայնությունը, թե համալսարանն ի վիճակի չէ ֆինանսավորել դասախոսների հեղինակած գրքերը:

Երևանի պետական համալսարանը միջազգային համագործակցության ասպարեզում միշտ էլ հանդես է եկել որպես կայուն և վստահելի գործընկեր, արժեքավոր ներդրում ունեցել գիտակրթական բազմաթիվ համաձայնագրերի իրականացման գործում: 2006-2007 ուսումնական տարում համալսարանը շարունակել և զարգացրել է փոխգործակցությունը շուրջ 50 օտարերկրյա համալսարանների և գիտական կենտրոնների հետ: Ներկայումս համալսարանը պայմանագրեր և համաձայնագրեր է կնքել աշխարհի շուրջ 40 երկրների 120-ից ավելի համալսարանների և հաստատությունների հետ:

Երևանի պետական համալսարանի եւ հասարակության միջև անմիջական կապ հաստատելու համար կենսական նշանակություն ունեն գանգվածային լրատվամիջոցների հետ շփումը, նրանց աջակցությամբ մայր բուհում տեղի ունեցող բոլոր իրադարձությունների մասին պատմելը, ՋԼՄ-ի կողմից նոր համակարգի վերլուծությունը, դրանց կարևորությունը, հնարավոր խնդիրները և այլն:

2006 թվականի հունիսի 6-ին ստեղծված հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունը եկավ լրացնելու այդ բացը, նոր որակ ապահովելու հանրության եւ ԵՊՀ-ի հարաբերություններում: ԵՊՀ վարկանիշի և հեղինակության բարձրացմանը նպաստող տեղեկատվության մշակմանը, կրթօջախի խորհրդանշանների և այլ քարոզչական նյութերի տարածմանն է միտված ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության գործունեությունը:

Մնացած ուղղություններով տարված աշխատանքներին թույլ տվեք մանրամասն չանդրադառնալ, նյութը ձեզ ներկայացված է, միայն թույլ տվեք ամփոփելով նշեն, որ ԵՊՀ 2006-2007 ուսումնական տարվա գործունեության տարբեր բնագավառներում, անշուշտ, եղել են թե՛ զգալի հաջողություններ ու ձեռքբերումներ և թե՛ թերացումներ ու բացթողումներ: Կատարված աշխատանքները նպաստել են համալսարանի զարգացմանը և նրա դերի ու հեղինակության բարձրացմանը: Սակայն չպետք է բավարարվել ձեռք բերածով: Բացթողումներն ու թերացումները, որ առկա են մայր բուհի գործունեության բոլոր ոլորտներում, պետք է վերացվեն կամ հնարավորինս նվազեցվեն համալսարանականների համատեղ ջանքերով:

Ելույթից հետո հայտարարվեց հարցերի հերթագրում: Զեկուցողին հարցեր չեղան:

Հայտարարվեց ելույթների հերթագրում:

Գրանցվեցին խորհրդի անդամներ **Տ. Թորոսյանը**, **Լ. Մկրտչյանը**, **Մ. Գրիգորյանը**, **Ա. Մելքոնյանը**, **Ա. Ավետիսյանը**, **Պ. Ստեփանյան**, **Ս. Հարությունյանը**, **Հ. Միրզոյանը**, **Վ. Դումանյանը**, **Գ. Ղազինյանը**, **Ռ. Մարտիրոսյանը**, **Գ. Ղազինյանը** և խորհրդի նախագահ **Ս. Սարգսյանը**:

**Տ. Թորոսյան** - Նախ ասեմ, որ իսկապես կատարված է մեծ ծավալի աշխատանք և կան էական, հուսադրող տեղաշարժեր, որպեսզի ԵՊՀ-ն դառնա այն կրթագիտական կենտրոնը, որը մենք ցանկանում ենք: Կանոնադառնամ պրոֆեսորադասախոսական կազմի ծերացման խնդրին, որը շատ կարևոր է: Համոզված եմ, որ գիտական կոչումներից զատ պետք է հաշվի առնել նաև ընթացիկ գիտական գործունեության ցուցանիշները: Մենք պետք է լուրջ քայլեր ձեռնարկենք գիտական կենտրոնի ստեղծման ուղղությամբ: Երկրորդ, երբ ծանոթանում ենք ամբիոնների կազմին, նկատելի է, որ ունենք լուրջ գիտնականներ, որոնք ընդգրկված չեն համալսարանի աշխատանքներում: Այս հարցը կարելի է լուծել տարբեր հնարավոր ճանապարհներով՝ ընդհուպ մինչև հատուկ կուրսերի ընդգրկումը ուսումնական ծրագրերում: **Շնորհակալություն**

**Լ. Մկրտչյան** - Իսկապես նկատելի են այն լուրջ տեղաշարժերը, որոնք կատարվել են ԵՊՀ-ում այս վերջին մեկ տարվա ընթացքում և օգտվելով նրանից, որ ներկա են ԵՊՀ դեկանները, ամբիոնի վարիչներ, կցանկանայի փոխանցել Լոնդոնի նախարարական խորհրդատուի պատգամը: Մտահոգությունը անգամ եվրոպական առաջատար բուհերում այն էր, որ բարեփոխումները զրոյական կլինեն, եթե դրանք չտեղափոխվեն ամբիոնների և ուսանողական մակարդակ: Այս ոլորտում մենք պետք է կատարենք լուրջ և հետևողական աշխատանք: Երկրորդ ուղղությունն այն է, որ ուսանողությունը գոհ չէ իր ներկայացուցչությունից, և կոչ եմ անում ԵՊՀ ուսանողական խորհրդին քայլեր անել այդ ներկայացուցչությունն ապահովելու համար: Ես կարծում եմ, որ համալսարանը շարունակում է պահպանել իր առաջատար դիրքերը մեր բարձրագույն կրթության ոլորտում:

**Մ. Գրիգորյան** - Ես գտնում եմ, որ ԵՊՀ-ում կատարված աշխատանքը կարելի է գնահատել բավարար: Սակայն նշեմ, որ ինձ չի բավարարում մեր շրջանավարտների որակը: Ցավոք, մենք՝ դեկաններս, ամբիոնի վարիչներս, չենք կարողանում գտնել այն ձևաչափը այդ որակն ապահովելու համար: Օգտվելով առիթից, կլինդրեի, որ ուշադրություն դարձնենք մեր դասախոսների վերապատրաստումը ռուսական կրթության համակարգում կազմակերպելու հարցին: Նախորդ տարի ես բարձրացրեցի մեր լաբորատորիաները հնարավորինս սարքավորումներով ապահովելու համար և, ի ուրախություն, նշեմ, որ այս տարի այդ խնդիրը մեծամասամբ լուծվեց: **Շնորհակալություն**:

**Ա. Մելքոնյան** - Ես կցանկանայի նշել, որ համալսարանը իսկապես կարողացել է ապահովել դրական և արդյունավետ համագործակցության մթնոլորտ տարբեր կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ-ի հետ: Սակայն թույլ տվեք նշեմ իմ



մտահոգությունը ասպիրանտական ընդունելության քննություններում օտար լեզվի ձևաչափի փոփոխության հետ, որի պատճառով մենք կորցնում ենք բավականին լավ մասնագետներ: Թույլ տվեք ևս մեկ անգամ կարևորել այն համագործակցության մթնոլորտը, որը պետք է շարունակել զարգացնել:

**Ա. Ավետիսյան** - Ես կցանկանայի անդրադառնալ կրթության որակի ապահովման մեկ կարևոր հարցի: Կրթության որակի բաղադրիչներից մեկը գիտաուսումնական լաբորատորիաների ստեղծումն է և վերազինումը և ես կոչ եմ անում ԵՊՀ ղեկավարությանը առաջիկա տարում մեծ ուշադրություն դարձնել այս հարցին, քանի որ հակառակ պարագայում մենք կկորցնենք հնարավորությունը մեր ասպիրանտներին դարձնել մրցունակ միջազգային դաշտում: Ես առաջարկում եմ դրական գնահատել համալսարանում կատարված աշխատանքը:

**Պ. Ստեփանյան** - Ճիշտ է, ԵՊՀ ռեկտորը նշեց և ես համաձայն եմ, որ ավելացել են հրատարակվող ուսումնամեթոդական գրականության ծավալները, սակայն չկա մի կառույց, որն ուսումնասիրի, թե ինչ է ուսանողին անհրաժեշտ և այս գործընթացը դեռևս տարերայնորեն է ընթանում: Այստեղ հրատապ է որոշակի սկզբունքների ընտրությունը: Շնորհակալություն:

**Ս. Հարությունյան** – Իսկապես, ինչպես նշվեց առաջին անգամ անցած տարում իրականացվեցին համաֆինանսավորվող ծրագրեր և ուրախ եմ, որ այս տարվա բյուջեում նույնպես նախատեսվում են այդպիսի ծրագրեր: Ապագայի համար ես կխնդրեմ համալսարանի ղեկավարությունից, որ ԵՊՀ-ն կնքի հնարավորինս շատ պայմանագրեր գործատուների հետ և մեր շրջանավարտները ունենան աշխատանք:

**Հ. Միրզոյան** - Ես կցանկանայի անդրադառնալ մեկ շատ կարևոր հարցի, ու մինչ այժմ մենք դասխոս ընտրելիս առաջնորդվում ենք գիտելիքների գնահատմամբ, սակայն ժամանակակից գործընթացները ոչ թե գիտելիքակենտրոն են, այլ՝ մարդակենտրոն և ինչպես նշեց պարոն Սկրտչյանը, բարեփոխումները տեղ չեն հասնում, քանի որ մեր մասնագետներից շատերի մոտ բացակայում են մանկավարժական հմտությունները, որի հետևանքով իջնում է կարգապահությունը և կրթության որակը: Կարծում եմ մենք պետք է ուշադրություն դարձնենք մանկավարժի ընտրության հարցին: Կխնդրեի նաև պետական մակարդակով ուշադրություն դարձնել և հաշվարկել, թե ինչքան գումար պետք է ծախսել մեկ բարձրորակ մասնագետի պատրաստման համար: Շնորհակալություն:

**Վ. Դումանյան** - Ես նպատակահարմար չեմ գտնում ԵՊՀ խորհրդում անդրադառնալ որակական հարցերի քննարկմանը, այլ առավել մանրամասն կանգ առնել բյուջեի քննարկմանը: Սակայն կանդրադառնամ մեկ հարցի, որ մեր ժամանակաշրջանում գրականության հրատարակման գումարների մի մասը ուղղել էլեկտրոնային հրատարակություններին, որը առավել խնայողական է և առավել հարմար ու արդյունավետ օգտագործման համար: Առաջարկում եմ հավանություն տալ ռեկտորի հաշվետվությանը:

**Ռ. Մարտիրոսյան** - Ես մանրամասն ծանոթացա ներկայացված նյութերին և կարող եմ նշել, որ այս տարի ներկայացված հաշվետվության ձևերը բավականին արդյունավետ

են: Կցանկանայի անդրադառնալ կրեդիտային համակարգի ներդրմանը և կկարևորեի նաև մեր ավանդական մոտեցումների պահպանմանը և այս երկուսի արդյունավետ համադրություն ստեղծելուն: Մյուս հարցը ՀՀ ԳԱԱ մասնագետների մասնակցությունն է ուսումնական գործընթացին: Ուսումնական ժամերի կրճատման հետ մասնագետներ հրավիրելու բարդություններ են առաջանում և այս ուղղությամբ պետք է աշխատանքներ կատարել: Ես էլ կարծում եմ, որ պետք է հավանություն տալ ռեկտորի և ռեկտորատի աշխատանքին:

**Գ. Ղազինյան** - Ես համաձայն եմ, որ մեր խնդիրը որակյալ մասնագետների պատրաստումն է, սակայն մենք չենք անդրադառնում այն հարցին, թե ինչ դիմորդներ ենք մենք ստանում: Մենք ընդունում ենք շատ և, փորձը ցույց է տալիս, որ հիմնականում անորակ: Սակայն չենք կարող սահմանափակել ընդունելության քնակը, քանի որ առկա են ֆինանսական խնդիրներ: Ես խնդրում եմ փորձենք լուծումներ գտնել այս օբյեկտիվ փակ շղթայից դուրս գալու համար: Մյուս խնդիրը այս համակարգում բազմահայտային մոտեցումն է, որի արդյունքում շատերը հայտնվում են ոչ այնտեղ ուր ցանկանում են, խախտվում է մասնագիտական կողմնորոշման խնդիրը և արդյունքում ուսանողը չի ցանկանում սովորել այնտեղ ուր ընդունվել է: Կարծում եմ պետք է վերադառնալ մեկհայտանի համակարգին: Շնորհակալություն:

**Ս. Սարգսյան (խորհրդի նախագահ)** - Ես ևս կարծում եմ, որ համալսարանում մեծ աշխատանք է կատարվել, սակայն գտնում եմ նաև, որ մենք շատ ենք հեռու այն չափանիշներից, որոնց ձգտում ենք: Կառավարության վերջին խորհրդակցություններից մեկի շամանակ քննարկում էինք տաղանդաշատ ուսանողներին աշխարհի լավագույն համալսարաններում կրթություն ստանալու օժանդակման հարցը: Խորհրդակցության նախապատրաստման ժամանակ մենք ստացանք աշխարհի լավագույն համալսարանների ցանկը և 500 բուհերի ցանկում ընդգրկված չեն այնպիսի հաստատություններ, որոնք ձեզնից շատերի համար հեղինակավոր են: Այսինքն եթե սկսենք նույն չափանիշներով գնահատել, մենք նույնիսկ 1500-ի մեջ էլ չենք ընդգրկվի: Մենք չենք կարող այդ չափանիշներին չձգտել, մենք չենք կարող կադապարվել մեր համակարգում, այլ պետք է ձգտենք հասնել եվրոպական չափանիշների պահանջների գոնե միջին մակարդակին և դրանից հետո հարող ենք միայն մտածել մեր ազգային կրթության զարգացման մասին: Եթե մենք ուզում ենք մրցունակ լինել, եթե ուզում ենք լավ ապրել պետք է կարողանանք այդ չափանիշներին բավարարել և այլ ճանապարհ չունենք: Այժմ կցանկանայի անդրադառնալ առաջադրված հարցերին` ցույց տալով մեր կառավարության մոտեցումը: Այժմ 2008թ-ի բյուջեում կրթությանը և գիտությանը հատկացվում է բյուջեի 3%-ը, այնքան ինչքան հատկացվում է պաշտպանությանը: Ծավալային առումով, դա իհարկե, ավելի շատ է քան անցած տարի, բյուջեի ավելացման հետևանքով: Ինչ վերաբերում է կրթության որակին, ես խոստանում եմ, որ առաջիկա 3 տարում քննությունները լինելու են ավտոմատիզացված, որոնք կարգելեն անգրագետ շրջանավարտների մուտքը Բուհ: Վերապատրաստման հարցի հետ կապված չեմ կարծում, որ պետք է հազարավոր դասախոսների ուղարկել վերապատրաստման, այլ հրավիրել համապատասխան մասնագետներ

արտասահմանից: Արդյունքում կնշեն, որ աշխատանքները կատարվել են այնպիսի տեմպերով, որ որևէ մեկը բացասական գնահատական չտվեց, սակայն մեք պարտավոր ենք ավելացնել տեմպերը և ձգտել բավարարելու պահանջվող չափանիշները:

Ելույթներից հետո ԵՊՀ խորհրդի նախագահը առաջարկեց քվեարկության միջոցով ընդունել որոշում հաստատելու ԵՊՀ ռեկտորի հաշվետվությունը ԵՊՀ 2006-2007 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ և այն գնահատել բավարար:

Կողմ` 63, Դեմ` 0, Ձեռնպահ` 0:

Մինչ հաջորդ հարցերի անդրադարձնալը խորհուրդը որոշեց հեռանալ 10 րոպե ընդմիջման:

2. ԵՊՀ 2006-2007 ուսումնական տարվա եկամուտների և ծախսերի մասին հաշվետվության հաստատում:

*Ձեկ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան*

**Ա. Սիմոնյան** - 2007 թվականի տասնմեկ ամսվա ընթացքում Երևանի պետական համալսարանի եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջեի) մուտքերը կազմել են 4,691,760.0 հազար դրամ, ինչը կազմում է ԲՈՒՀ-ի տարեկան ճշտված նախահաշվի (բյուջեի) 94.1 տոկոսը: Ծախսերը` 4,541,429.6 հազար դրամ, ինչը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի (բյուջեի) 88.6 տոկոսը:

2007 թվականի տասնմեկ ամսում Երևանի պետական համալսարանի եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջեի) մուտքերի 66 տոկոսը, կամ 3,096,789.0 հազար դրամը ձևավորվել է վճարովի ուսուցման ծառայությունից ստացված ուսման վարձերից, ինչը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 99 տոկոսը:

Պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է 23.9 տոկոսը, կամ 1,119,497.6 հազար դրամ, ինչը կազմում է նախահաշվի նույն հոդվածի 81 տոկոսը:

Գործառնական գործունեությունից, ներառյալ ԱԱՀ-ը` 2.9 տոկոսը, կամ 135,827.3 հազար դրամ, որը կազմում է նախահաշվի նույն հոդվածի 93.7 տոկոսը:

Բանկերում ավանդ ձևակերպված գումարներից ստացվող տոկոսներից եկամուտը կազմել է 0.5 տոկոսը, կամ 24,391.5 հազար դրամ, որը կազմում է նախահաշվի նույն հոդվածի 71.7 տոկոսը:

Դրամաշնորհները ստացվող եկամուտները կազմել են 2.2 տոկոսը, կամ 105,614.7 հազար դրամ, որը գերազանցել է նախահաշվի նույն հոդվածի ցուցանիշը 0.6 տոկոսով:

Բարեգործական եկամուտները կազմել են` 0.2 տոկոսը, կամ 8,670.5 հազար դրամ, որը կազմում է նախահաշվի նույն հոդվածի 41.9 տոկոսը:

Այլ եկամուտները կազմել են` 1.1 տոկոսը, կամ 51,557.4 հազար դրամ, որը գերազանցել է նախահաշվի նույն հոդվածի ցուցանիշը 1.1 տոկոսով:

Ստացված փոխառու միջոցները ընդհանուր մուտքերի մեջ կազմել են 3.2 տոկոսը, կամ 149,412.0 հազար դրամ:

Վճարովի ուսուցման ծառայության գերակշիռ մասը կազմում է բակալավրիատ և հինգամյա ուսուցման ծառայությունից ստացվող եկամուտները, այն կազմում է 73.4 տոկոսը: Մագիստրատուրայի ուսուցման ծառայությունից ստացվող եկամուտները կազմում են 19.3 տոկոսը, հեռակա ուսուցման ծառայությունից ստացվող եկամուտները` 4.8 տոկոս և ասպիրանտուրայի ուսուցման ծառայությունից ստացվող եկամուտները` 2.5 տոկոս:

Պետական բյուջեից ստացվող ֆինանսավորումների 70.2 տոկոսը կազմում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծառայությունից ստացվող մուտքերը, 28.6 տոկոսը` գիտական և գիտատեխնիկական գործունեությունից ստացվող մուտքերը և 1.2 տոկոսը` այլ ծրագրերով ստացվող մուտքերը (1. Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում և 2. Ընդունելության քննությունների կազմակերպում):

Գործառնական գործունեությունից ստացվող եկամուտների 42.8 տոկոսը կազմում է ԵՊՀ հյուրերի տան բնակության վարձերից ստացվող եկամուտները, 27.5 տոկոսը` ուսումնասիրտադրական բազաներում ԵՊՀ աշխատակիցների հանգստի կազմակերպման համար ուղեգրերի վաճառքից ստացվող եկամուտները: Լրացուցիչ կրթական դասընթացների կազմակերպումից ստացվող եկամուտները կազմում են 21.6 տոկոսը: Տպագրական, ատամնաբուժական ծառայություններից, գույքի վարձակալությունից և գրքերի վաճառքից ստացվող եկամուտները կազմում են 8.1 տոկոսը:

Այլ եկամուտների 46.4 տոկոսը կազմում է բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության քննությունների կազմակերպման համար ստացվող եկամուտներից, 17.6 տոկոսը` փաստաթղթերի ձևակերպումներից ստացվող եկամուտներից, 18.3 տոկոսը` որակավորման, թեկնածուական քննությունների, ասպիրանտական ստուգարքների, բուժ. պատրաստման և քաղ. պաշտպանության, ֆիզիկական դաստիարակության դասընթացների վճարներից, 17.7 տոկոսը` հիմնական միջոցների և ապրանքանյութական պաշարների վաճառքից ստացվող եկամուտներից:

2007 թվականի տասնմեկ ամսում (հունվար-նոյեմբեր) Երևանի պետական համալսարանի եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջեի) միջոցների հաշվին կատարվել են 4,541,429.6 հազար դրամի ծախսեր, ինչը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի 88.6 տոկոսը: Նշված միջոցների 85.0 տոկոսը, կամ 3,859,841.8 հազար դրամը, ինչը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի 87.6 տոկոսը, ուղղվել է ընթացիկ և 15.0 տոկոսը, կամ 681,587.8 հազար դրամը, ինչը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի 94.8 տոկոսը` ոչ ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:

Ընթացիկ ծախսերի 65.2 տոկոսը, կամ 2,518,036.5 հազար դրամը, ինչը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 87.3 տոկոսը, ուղղվել է աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված վճարումների ծախսերին:

Երևանի պետական համալսարանում աշխատակիցների թիվը կազմում է միջին ամսական 3,007 մարդ, մեկ ամսվա միջին աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրան հավասարեցված վճարների ծախսը կազմում է 228,258.4 հազար դրամ, միջին ամսական աշխատավարձը հավասար է 75.9 հազար դրամի, իսկ նվազագույն ամսական աշխատավարձը կազմում է 31.0 հազար դրամ:

Կրթաթոշակի ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 4.9 տոկոսը, կամ 186,884.9 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 89.0 տոկոսը:

Հարկեր և պարտադիր վճարներ հոդվածի ծախսերը կազմել են 15.9 տոկոս, կամ 613,161.9 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 90.2 տոկոսը:

Կոմունալ վճարների ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 4.1 տոկոսը, կամ 159,293.4 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 90.5 տոկոսը:

Փոստային և կապի վճարների ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 0.6 տոկոսը, կամ 24,354.5 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 89.5 տոկոսը:

Գրասենյակային ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 0.6 տոկոսը, կամ 22,023.7 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 100.1 տոկոսը:

Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 1.8 տոկոսը, կամ 69,357.0 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 93.1 տոկոսը:

Տրանսպորտային ծախսերը կազմել է ընթացիկ ծախսերի 0.8 տոկոսը, կամ 32,429.9 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 88.8 տոկոսը:

Ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 1.2 տոկոսը, կամ 46,175.0 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 90.9 տոկոսը:

Ներկայացուցչական ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 0.2 տոկոսը, կամ 8,610.7 հազար դրամ, որը կազմում է տարեկան հաստատված նախահաշվի նույն հոդվածի 95.7 տոկոսը:

Անդամավճարների ծախսերը կազմել են 0.1 տոկոսը, կամ 4,817.7 հազար դրամ, որը կազմում է տարեկան հաստատված նախահաշվի նույն հոդվածի 120.4 տոկոսը, կամ գերազանցել է 20.4 տոկոսով:

Ուսանողական միջոցառումների ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 0.2 տոկոսը, կամ 8,306.5 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 92.3 տոկոսը:

Գործուղման ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 0.6 տոկոսը, կամ 23,870.7 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 95.5 տոկոսը:

Արտադրական պրակտիկայի ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 0.2 տոկոսը, կամ 8,035.8 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 85.5 տոկոսը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆինանսավորման ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 1.6 տոկոսը, կամ 60,000.0 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 75.0 տոկոսը:

«Սինքրոտրոնային ճառագայթման օգտագործմամբ ԳՀ կենտրոն» ԳՀ ինստիտուտին ֆինանսավորման ծախսերը կազմել են 0.5 տոկոսը, կամ 17,760.0 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 44.4 տոկոսը:

Վարկային գումարի տոկոսային պարտավորության ծախսերը կազմել են 0.2 տոկոսը, կամ 8,784.9 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 98.0 տոկոսը:

Այլ ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 1.3 տոկոսը, կամ 47,938.7 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 79.9 տոկոսը:

Ոչ ընթացիկ ծախսերի 28.3 տոկոսը, կամ 193,082.8 հազար դրամը, ինչը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 94.0 տոկոսը ուղղվել է ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսերին:

Հիմնանորոգման ծախսերը կազմել են ոչ ընթացիկ ծախսերի 68.9 տոկոսը, կամ 469,154.1 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 95.3 տոկոսը:

Շինարարական ծախսերը կազմել են ոչ ընթացիկ ծախսերի 0.7 տոկոսը, կամ 4,947.0 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 100.0 տոկոսը:

Գրադարանային ծախսերը կազմել են ոչ ընթացիկ ծախսերի 2.1 տոկոսը, կամ 14,403.9 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի նույն հոդվածի 90.0 տոկոսը:

Երևանի պետական համալսարանը մասնակցել է նաև համաֆինանսավորում պահանջող դրամաշնորհային ծրագրին, որի մեծություները դրամական արտահայտությամբ կազմել է 33,350.0 հազար դրամ, որը կազմում է տարեկան ճշտված նախահաշվի բոլոր ծախսային հոդվածների 0.7 տոկոսը:

Ելույթից հետո հայտարարվեց հարցերի գրանցում: Գրանցվեցին Ռ. Մարտիրոսյանը, Վ. Դումանյանը:

**Ռ. Մարտիրոսյան** - Ես կցանկանայի ճշտել, թե Հայ բարեգործական ընդհանուր միության համալսարանին հատկացված հիմնադրամից ծախսեր կատարվել են:

**Ա. Սիմոնյան** - Այս տարի նրանք գումար չեն փոխանցել, սակայն խոստացել են մյուս ֆինանսական տարվում գումարը փոխանցել և մենք այն հաշվի ենք առել մյուս տարվա բյուջեում մոտավոր չափերով:

**Վ. Դումանյան** - Կինդրեի պարզաբանել թե ինչպես է ձեռք բերվել վարկային գումարը և ինչ ձևով է մարվելու և արդյոք հաջորդ տարվա ուսման վարձերի զեղչերը հաշվի առնվել են:

**Ա. Սիմոնյան** – Վարկային գումարի մասին ես արդեն ելույթում նշեցի, սակայն ավելացնեմ, որ մենք գումարը ձեռք ենք բերել դոլարով և փոխարժեքի փոփոխության հետ կապված մենք արդեն իսկ մեր մարելիք տոկոսները և մի փոքր էլ ավել շահել ենք, իսկ մայր գումարը նախատեսվում է մարել 2008-ի բյուջեով: Ինչ վերաբերում է ուսման վարձերի զեղչերին, ապա նշեմ, որ յուրաքանչյուր տարվա ավարտին մենք արդեն իսկ նախատեսում ենք հաջորդ տարվա զեղչերի ընդհանուր չափը և ինչպես երևում է հաշվետվությունից չենք գերազանցում այն:

Ելույթներից հետո ԵՊՀ խորհրդի նախագահը քվերակության առաջարկեց ընդունել Երևանի պետական համալսարանի 2007թ.-ի ֆինանսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունը և այն բավարար գնահատելու որոշումը:

Կողմ`63, Դեմ` 0, Ձեռնպահ`0:

3. ԵՊՀ 2008թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագծի հաստատում:

*Ձեկ. ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյան*

Նախահաշվի հոդվածների ցուցանիշները կազմվել են համաձայն նախորդ տարվա նախահաշվի կատարողական ցուցանիշների, ինչպես նաև կանխատեսումների և պլանավորումների հիման վրա:

Գործառույթների արտարժույթային հոսքերը նախահաշվում հաշվարկվել են ՀՀ դրամով` հիմք ընդունելով պետական բյուջեով նախատեսված հաշվարկային կուրսերը.

1 դոլարը` 325.16 դրամ փոխարժեքով, 1 եվրոն` 469.76 դրամ փոխարժեքով:

Նախահաշվի եկամուտները կազմել են 5,444,839.6 հազար դրամ, ինչը 12.5 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա եկամտային մասի ցուցանիշները: 2008 թվականին նախատեսված չէ փոխառու միջոցների ներգրավումը, ինչ կատարվել է 2007 թվականի ընթացքում: 2007 թ-ի դրամական միջոցների մուտքերի հոդվածներում

փոխառու միջոցների չափը կազմել է 149,412.0 հազար դրամ: Վերընշվածի հետևանքով 2008 թ-ի դրամական միջոցների մուտքերի հանրագումարը 2007 թ-ի դրամական միջոցների մուտքերի հետ համեմատելիս 2008 թ-ի աճը կազմել է 9.2 տոկոս:

1. Եկամուտների զգալի մասը վճարովի ուսուցման ծառայությունից ակնկալվող մուտքերն են, որոնք կազմում են 3,472,566.0 հազար դրամ, կամ նախահաշվի եկամուտների 63.8 տոկոսը: Այն գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 12 տոկոսով, որը հիմնականում պայմանավորված է հեռակա ուսուցման համակարգի ներդրումով, որից ակնկալվում է հաշվետու տարվա եկամուտների մեջ 264,960.0 հազար դրամ: Ուսման վարձերի մասով եկամուտների աճը պայմանավորված է նաև 2007-08 ուսումնական տարվանից ուսման վարձերի բարձրացմբ: Այսպես՝ 2006-07 ուստարվա ուսման վարձերի միջին չափը համալսարանում ՀՀ քաղաքացիների համար կազմել է 283.3 հազար դրամ, իսկ 2007-08 ուս. տարում այն կազմում է 330.9 հազար դրամ (հավելված 1): Մեկ ուսանողի հաշվարկով վճարովի ուսուցման ծառայությունների մեջ ծախսը կազմում է 280.0 հազար դրամ:

Բարձրագույն կրթության ծառայության մասով պետական բյուջեից ԵՊՀ-ն ֆինանսավորում է ստանում տարեկան 3,502 ուսանողների համար՝ որպես ուսման վարձի փոխհատուցում: Ֆինանսավորումը տրվում է երկու հոդվածներով.

1. Կրթաթոշակի նպաստ և 2. Ուսման վարձի փոխհատուցման նպաստ:

Մեկ ուսանողի համար փոխհատուցվող ուսման վարձի նպաստը կազմում է 188.9 հազար դրամ: Կրթաթոշակի նպաստը՝ 64.3 հազար դրամ, կամ ամսական 5.3 հազար դրամ: Ընդամենը՝ 253.2 հազար դրամ: 2008 թ-ի ընթացքում պետական բյուջեից ակնկալվում է ստանալ ֆինանսավորում, որպես ուսման վարձի փոխհատուցում ներառյալ կրթաթոշակի նպաստը 1,025,000.0 հազար դրամ, այդ թվում կրթաթոշակի նպաստ՝ 254,240.0 հազար դրամ:

2. 2008 թ-ին գիտական և գիտատեխնիկական գործունեության ցուցանիշները ևս գերազանցելու են 2007 թ-ի ցուցանիշները՝ 104,048.1 հազար դրամով: Այն հիմնականում պայմանավորված է աշխատավարձի բարձրացման հետ: Այսպես պայմանագրային (թեմատիկ) աշխատանքների համար 2007 թ-ին մեկ հաստիքի համար առանց գիտական աստիճանի համար հավելավճարների հաշվարկվում էր 30.8 հազար դրամ, ներառյալ գործատուի կողմից վճարվող սոցիալական ապահովագրության պարտադիր վճարները, իսկ 2008 թ-ին հաշվարկվելու է 51.9 հազար դրամ:

3. ԵՊՀ կանոնադրությամբ թույլատրվող գործառնական այլ գործունեության ցուցանիշները նույնպես գերազանցելու են նախորդ տարվա ցուցանիշները:

4. Դրամական միջոցների հաջորդ մուտքային հոդվածում «Ոչ գործառնական եկամուտների» 2008 թ-ի ցուցանիշները նվազելու են 2007 թ-ի նույն հոդվածի համեմատ: Մասնավորապես ավելի քիչ են լինելու «Բարեգործական եկամուտները» և «Բանկում ավանդ ձևակերպված դրամական միջոցներից ստացվող տոկոսները»:



Սակայն այս հոդվածում նախորդ տարվա համեմատ 2008 թ-ի ցուցանիշները ավելին են լինելու «Դրամաշնորհներից» ստացվող եկամուտների գծով:

Նախահաշվի դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներն են.

1. Նախահաշվի դրամական միջոցների ելքերի հոդվածների հանրագումարը, որը կազմելու է 5,529,845.0 հազար դրամ 2007 թ-ի հոդվածների հանրագումարի համեմատ աճելու է 7.9 տոկոսով: Իսկ 2008 թ-ի նախահաշվի ծախսային հոդվածները 2007 թ-ի ծախսային հոդվածների նկատմամբ աճելու է 5.1 տոկոսով: Տարբերության 2.8 տոկոսը կամ 142,500.0 հազար դրամը 2007 թ-ի փոխառու միջոցների մարումն է 2008 թ-ին:

2008 թ-ի նախահաշվի դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածներում ընթացիկ ծախսերը կազույց են 5,083,845 հազ. դրամ կամ 91.9 տոկոս, ոչ ընթացիկ ծախսերը՝ 446,000 հազ. դրամ կամ 8.1 տոկոս: Նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերը աճելու են 676 480 հազ. դրամով, կամ 15.3 տոկոսով, իսկ ոչ ընթացիկ ծախսերը նվազելու են 272,647 հազ. դրամով կամ 37.9 տոկոսով:

2. 2008 թ-ի նախահաշվի «Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածում միջոցների աճը 2007 թ-ի նկատմամբ պայմանավորված է բարձրագույն կրթության հեռակա ուսուցման վճարովի ծառայության մասով աշխատավարձի բարձրացման հետ, ինչպես նաև 2008-09 ուս. տարվանից ներդրվում է «Տարբերակված» աշխատանքի վարձատրության համակարգը, որը վերաբերվում է պրոֆեսորադասախոսական անձնակազմին:

2008 թ-ի նախահաշվի ծախսային հոդվածներում առանձին տողով միջոցներ են նախատեսվել նորաստեղծ կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների կազմակերպման, ինչպես նաև Երևանի պետական համալսարանին անհրաժեշտ այնպիսի ծախսերի համար ինչպիսիք են

- Կրթական բարեփոխումների անցկացման ծախսերը
- Շրջանավարտների հետ տարվող աշխատանքների և կարիերայի զարգացման միջոցառումների ծախսերը
- Հասարակայնության և լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքների ծախսերը
- Ուսանողական գիտական ընկերությունների միջոցառումների ծախսերը
- Ուսանողական գործուղումների ծախսերը
- Համաֆինանսավորում պահանջող դրամաշնորհային ծրագրերի ծախսերը

2008 թ-ի նախահաշվի դրամական միջոցների ելքերի (ծախսերի) հոդվածների 5,529,845.0 հազար դրամ միջոցներից 4,794,685.0 հազար դրամը, կամ 86.7 տոկոսը կազմում են պարտադիր, ամենամյա ծախսեր պահանջող հոդվածները, դրանք են.

- Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումների ծախսերը
- Կրթաթոշակի վճարման ծախսերը
- Վճարումներ պետական բյուջե
- Կոմունալ վճարների ծախսերը
- Փոստային և կապի վճարների ծախսերը

- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղին ֆինանսավորման ծախսերը
- Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծախսերը
- Փոխառու միջոցների մարման ծախսերը

2008 թ-ին ԵՊՀ ֆակուլտետներին չափաբաժիններ է կհատկացվի նախահաշվի հետևյալ ծախսային հոդվածներից.

- Գրասենյակային ծախսեր
- Գործուղման ծախսեր
- Ուսանողական միջոցառումների ծախսեր
- Ծառայությունների ձեռք բերման ծախսեր
- Այլ ծախսեր
- Ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման ծախսեր

2007 թ-ին կառուցվածքային ստորաբաժանումներին չափաբաժիններ հատկացվել է երեք ծախսային հոդվածներից:

1. Գրասենյակային ծախսեր
2. Ծառայությունների ձեռք բերման ծախսեր
3. Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման ծախսեր

ԵՊՀ գործառույթների բնույթից ելնելով՝ նախահաշվի որոշ հոդվածների բաշխումը կատարվում է ըստ ռեկտորի հրամանների և կարգադրությունների: Մասնավորապես.

1. Ներկայացուցչական ծախսեր
2. Անդամավճարներ

3. Կառուցվածքային ստորաբաժանումների՝ գործուղման ծախսերի և այլ ծախսերի բաշխում

Ելույթից հետո հայտարարվեց հարցերի գրանցում:

Գրանցվեցին Յ. Վարդանյանը, Ա. Ավետիսյանը, Ռ. Մարտիրոսյանը, Հ. Սարգսյանը, Վ. Դումանյանը:

**Յ. Վարդանյան** - Ավելանալու են արդյո՞ք ուսանողների կրթաթոշակները:

**Ա. Սիմոնյան** - Պարոն Վարդանյան, արդեն իսկ կա կառավարության որոշում և 2008թ-ին ասպիրանտների կրթաթոշակները կրկնակի ավելացել են, իսկ ուսանողների կրթաթոշակի ավելացում չ սպասվում:

**Ա. Ավետիսյան** - 2008-2009թթ. վարձավճարների ավելացում սպասվում է՞:

**Ա. Սիմոնյան** - Ոչ:

**Ռ. Մարտիրոսյան** - Պարոն Սիմոնյան 803 միլիոն պետական բյուջե վճարումներում ո՞ր հարկերն են նախատեսվում:

**Ա. Սիմոնյան** - Այստեղ ընդգրկված են բոլոր տեսակի հարկերը, բացի գույքահարկից և բնավճարի հարկից:

**Հ. Սարգսյան** – Փորձաքննության ենթարկելով ԵՊՀ բյուջեն և հաշվի առնելով ԵՊՀ ֆինանսական մուտքերն ու ծախսերը, որակի բարձրացման համար ստիպված ենք

գնալ գումարների հայթայթման ոչ ստանդարտ միջոցների: Նման միջոցառումներ նախատեսում եք:

**Ա. Սիմոնյան** - Նման միջոցներ այս պահին մենք չենք տեսնում, սակայն եթե ընթացքում նման աղբյուրներ հնարավոր եղավ հայթայթել, ապա մենք մեծ սիրով ԵՊՀ խորհրդի հաստատմանը կներկայացնենք բյուջեի փոփոխման նախագիծ, որում կընդգրկենք հավելյալ միջոցները:

**Վ. Դումանյան** - Հավելված 18-ում նախատեսված է 50 միլիոն հասարակական կազմակերպություններին անդամավճարներ, իսկ հնարավոր չէ՞ դրանք պակասեցնել:

**Ա. Սիմոնյան** - Սա վերաբերում է կրթական և գիտական հաստատություններին վճարումներ կատարելուն, որի անդամ է Երևանի պետական համալսարանը: Դա հնարավոր կլիներ, եթե մենք դադարեցնենք մեր անդամությունը որոշներում, որը խրախուսելի չէ:

Հարցերից հետո ԵՊՀ խորհուրդը քվերակության միջոցով որոշեց.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի 2008թ. ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի(բյուջե) նախագիծը:
2. Հանձնարարել ԵՊՀ ռեկտորին 2008թ.-ի ծախսերը կատարել հաստատված բյուջեին համապատասխան:

Կողմ՝ 63, Դեմ՝ 0, Ձեռնպահ՝ 0:

**Ա. Սիմոնյան** - Թույլ տվեք բյուջեի կազմման համար շնորհակալություն հայտնել բոլոր այն մարդկանց, ովքեր շահագրգիռ կերպով մասնակից եղան բյուջեի կազմմանը, նրա փորձաքննության անցկացմանը: Եվ պարտավորվում եմ կատարել բյուջեն այն ծավալով, այն հողվածներով և ժամկետներում, ինչը այսօր հաստատեց ԵՊՀ խորհուրդը:

#### *4. Ընթացիկ հարցեր*

Նախագահությունը ընթացիկ հարցերի վերաբերյալ առաջարկություններ չներկայացրեց: Ընթացիկ հարցեր չառաջարկվեցին նաև խորհրդի անդամների կողմից:

Խորհրդի նախագահ՝

Ս. Սարգսյան

Քարտուղար՝

Դ. Հայրապետյան

26.12.2007թ.

ք. Երևան